

ՀԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտրա 13 դեկտ.

Այստ հրատարակեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գերմանիա և Աւստրիա արդէն հաւանութիւն տուեր են Հելլենական խնդրոյն համար Եւրոպական միջնորդութիւն մ'ընկելու առաջարկութեան՝ զոր Պ. Վալտերիկի մը ըրած է ։

Կալիթնայէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Քապուլի զինուորական իշխանութիւնը աստիկանական ամենախիստ միջոցներ ձեռք առած են , տեսնելով բազում նշաններէ թէ թշնամոյն հետ յարաբերութիւն ունեցող մարդիկ՝ նոյն իսկ քաղաքին մէջ ալ յուզմունք հանելու կաշխատին ։

Ռօպէրթս զօրավարին հրամանաւ կախուած մարդոց մէջ կը գտնուէր նաև Քապուլի Մոլլաներուն գլուխն և երկու զօրավարք , որոց մին թագաւորական տոհմէ ։

Յուզմունք հանդիսերը կըսեն թէ այս մարդիկը Սըր Քալանեսարիի և հետեորդներուն սպանութեանը մասնակից եղած չեն , այլ միայն երկրորդայն եղած թըշնամական յարձակմանց զինադրութիւն կազմուորած են ։

Ազատական լրագիրը կ'ամբաստանեն Ռօպէրթս զօրավար թէ չափազանց խնայողութիւն բանեցնելով՝ Անգլիացւոց գէտ ընդդիմութիւն հանելու սպառնաւ եղաւ ։

Լոնտրա 19 դեկտ.

Այս առաւօտեան Մօրիսիի Բօսթ կըսէ ։

«Արմանաթ թէ կառավարութիւնը Բեդրասուրիի Անգլիական զեսպանաւորութեան հեռագիր մ'ստացեր է ծանուցանող թէ Ռուսիոյ կայսրն հաւանք է յանձնախորհուրդ մը կազմելու , որ հասարակայնի վարչութեան մէջ հարկ եղած բարենորոգումներն առաջարկէ իրեն ։

Տէյլի թէլէկրաֆ կը ծանուցանէ թէ յեղափոխութիւն հանելու հրաւիրող անթիւ տեսարաններ ու թերթեր կրցնէր են Ռուսիոյ սահմանագլխէն ներս մտնել՝ առանց Ռուսական իշխանութիւններէն նշարուելու ։ Նոյն լրագիրը կը պնդէ նաև թէ Ռուսիոյ մէջ ձերբակալեալ անձերէն շատեր բնաւ մասնակցութիւն ունեցած չեն Ոչնչականաց շարժման ։

Վիէննա 19 դեկտ.

Այս առաւօտեան լրագիրը հաւանութիւն կը յայտնեն Աւստրո-Հունգարիոյ կայսեր ըրած բանախօսութեան , որոյ մէջ կայսրն յայտարարած է թէ Գերմանիոյ և Աւստրո-Հունգարիոյ համաձայնութիւնն՝ Եւրոպիոյ մէջ խաղաղութեան անվերջ պահուելուն երաշխաւորութիւն մ'է ։

Կը հաւատան թէ վերջին օրերս Արևելեան խնդրոյն այլ և այլ կէտերուն վրայ կարծեաց և տեսութեանց փոխանակութիւն մ'ընդեր է Անգլիոյ , Գերմանիոյ և Աւստրիոյ միջև ։

Բեդրասուրի 19 դեկտ.

Բեդրասուրիի Ժուրնալը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կայսրուհին ծանր հիւանդ է կոտացաւ ։

Ռուսիա առաջարկեց Գերմանիոյ , որ Ռեչնակոնաց և Ընկերդարականաց գէտ միտքան միջոցներ ձեռք առնուն , բայց Գերմանիոյ և Աւստրո-Հունգարիոյ միջև կիցուած դաշնակցութեան մէջ Ռուսիա ալ մտնելու համար բանակցութիւններ ընդհատեալ չէ վերջին օրերս ։

Լոնտրա 17 դեկտ.

Ազատական թերթերն Հնդկաստանի ժողովրդեան Անգլիոյ կառավարութեան գէտ ունեցած այլ և այլ գանդախները կը քննեն ։

Պ. Կառլսթրօմս յայտնեց թէ Հնդկաստան խիստ գէշ կը կառավարուի , և թէ պէտք է նկատողութեան առնուլ այդ ժողովրդոց արդար գանդախներն և արդարութիւն ընել ։

Այս առաւօտեան հեռագիրէ

Լազոր , 19 դեկտ.

Կոստ զօրավարն , (որ օգնութիւն կը տանէր Ռօպէրթս զօրավարին) քանի մը հազար Ղալիպոնեան կողմէ պաշարեալ է Եւստրուզի ամրոցին մէջ ։

Բեդրասուրի , 19 դեկտ.

Գաղտնի ստիկանութեան գլուխ Պ. Տըրէնթէնէն զօրավարն հրաժարական տուաւ ։

Բեդրասուրիի մէջ գաղտնի տարւան մ'երևան հանուեցաւ ։

Մոսկուայի կառավարչին գէտ փորձուած դաւաճանութիւն մ'ի դերն Լազոր ։

Փարիզ , 19 դեկտ.

Ի նպատակ Սպանիոյ ողորդելու՝ Գաղղիական մասիոյն կողմանէ Իրոտրօմի մէջ տրուած հանգիստ երէկ տեղի ունեցաւ կատարեալ յանդուրժեամբ ։

Պուրթէ , 18 դեկտ.

Այսօր , Իտալական զեսպանութեան ինչո՞ւն հանդիսաւոր ընդունելութեամբ Ռուսիոյ իշխանին ներկայեց իւր վկայագրերը ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Օսմանցի հռչակաւոր գրագէտ Քէմալ պէյ Միտիլիի կառավարիչ անուանեցաւ ։

Ղազի Մուխթար փաշան երկու օրէ ի վեր իվէք կը գտնուի , և կը ջանայ այն կողմերու մարտանգ Ալպանիացիներն համոզել Պէրլինի գաշնադրին ամբողջական դործադրութեան ։

Մշոյ , Պիթիլիի և Սլեբոքի Սանձադներէն բաղկացեալ Պիթիլիի նուրակազմ վիլայէթին գլխաւոր պաշտօնատարներն հետզհետէ անուանելու վրայ են ։ Մինչև ցարդ Հոյ պաշտօնատար չէ անուանուած ։

Պիթիլիի կուսակալ Արիֆ փաշան երէկ իւր պաշտօնատեղին ուղեորեցաւ նորընտիր Մէքիմպէիին հետ ։

Թուրք լրագիրը կըսեն թէ պիտիտիկիթօն փախած յայտներ է որ փարիզի Օսմանեան դեսպան մ'անուանին ։

Սուրիոյ կուսակալ Բարձրապատիւ Միտհաթ փաշան յաջորդէ ի մէջ այլոց կատարեալ ապահովութիւն հաստատելու Գամալիսին մէջ և շրջակաները , վիճակ մը՝ որ անձանթ է եղեր հոն մինչև ցարդ , թէ և տեղութեան ուրիշ մասերն ալ շատ ծանօթ չեն այդպիսի վիճակի մը հետ ։

Կէտիկ փաշայի հարադատ խաւաներն իրենց բողոքոյ աղաղակներուն մէջ խեղդեցին Կիւլլի Յակօր էֆէնստիի ձայնն , որ առաջարկած էր կառավարութեան թէ թաղին իսլամ տիկնայք անվնաս թատերադրութեանց ներկայ գտնուելու արտօնութիւն ունենան , և յանձն առած էր նաև անոնց հաբէ յարգել խաֆէսներ հաստատելով օթեակաց մէկ մասին մէջ ։ Կառավարութիւնը տուած հաւանութիւնն ետ առաւ ։

Չորեքշաբթի օրն՝ երկուստարգթուրք էֆէնտի մը ցաթիկելով Շիրքէթի 32 թիւ շողենաւը մտած ժամանակ ծոփն ինկաւ , և այնքան ջուր կընց որ փորը սաստիկ ուռեցաւ և ինք անդգայ մնաց ։ Շողենաւին սրճադործը , թէոտոր անուն Յայն մը , թուրքին վիճակը տեսնելով՝ ծով նետուեցաւ և բաւական աշխատեցէ ետե զայն ցամաքն հանց՝ առերեւոյթ մեռեալ վիճակի մէջ , և առանց քանի մ'անձերու խօսքին անսալու , որք խորհուրդ կուտային իրեն կամուրջին վրայ թողուլ զայն , թէոտոր այն կիսամեռ մարմինը բաղնիք մը տարաւ , հոն փորին ջուրը պարպեց և ինչ ինչ դեղեր դործածեց , որոց շնորհիւ թուրքը տակաւ առ տակաւ կենդանութեան նշաններ տուաւ և խելքը գլուխն եկաւ ։ Եւստոյ թէոտոր՝ մահուան ճիւղանէն ազատած այս մարդը թիւէն բռնելով

տունը տարաւ , ուր էֆէնտիին ընտանիքն առատաձեռնութեամբ վարձատրեց զայն ։

Նոյն իրիկունը Միտհաթի թիւ 6 շողենաւն ալ Գաշար քէօյի նաւամաւորացին մերձեցած ժամանակ նաւատի մը ծոփն ինկաւ , խեղճ մարդուն չուան մը նետեցին , բայց այնքան ձախող կերպիւ , որ վերը բաթթուեցաւ ։ Մարդը լողալ չէր գիտեր , միւս կողմէն , եթէ վեր քաշէին՝ պիտի խեղդուէր չուանէն ։ Շողենաւին մէջ օգնականներու պաշտօն կատարող Հայազգի մը Մալիան Սեպուհ անուն՝ զայս տեսնելով , ինքզինք ծովը նետեց , և մարդն աղաւթեց ի մեծ դահուլթիւն շողենաւուն մէջ գտնուող ուղեւորաց ։

Լա թիւրքի՝ այս պատմութիւնն ընելէ յետոյ՝ Համադճակի յայտնել թէ քաշակարտ օգնականներու պետին արժանի եղած վարձատրութիւնը պիտի տրուի որովհետեւ Միտհաթի տնօրէնութիւնն անձնուիրութիւնը քաջալերելու սովորութիւն չուէր ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՆԱԿԱՆ ՈՒՄՈՒՄԻՆԷ	
Երէկ իրիկուն գացուեցաւ	40,45
Այս առաւօտ բացուեցաւ	40,44
Կէս օրին	40,48

Բումբի երկաթուղի	Փր.	3 5/8
Թիւրքալի	Իր.	880
Թրակիայ	Օսմ. Իր.	3 5/8

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՊՈՑ

5 Դեկտեմբեր

Միտիլի թէլէկրաֆի բաժ.	Անգլ. Իր.	4,08
Փոստակալութեան		3,
Կ. Պօլսոյ Պաշտօնային		6 10
Քրէտի թէլէկրաֆ		3,38

Փր.	1863	Ձր.	69
	1865		58
	1869		56
	1872		17
	1873		48

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ

6 Դեկտեմբեր

Անգլ. Իր.	Գր.	109 36
Նարաչի ուղի		87 16
Խիւլիսի Ռուս		90 27
Դըբըրլից		51 10
Մէճիսիկի տարբերութիւն		6 31
Հինգ նոց		48
Մէթալիք		48 20
Պրինձ		360

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Հակահասունեան աղգայինք իրենց երթեւեկութիւնը կը շարունակեն առ Բ. Դաւոն՝ պատասխան մը կամ աւելի ճիշդ է ըսել Դեղիեան պատգամ մ'ստանալու համար իրենց այն խեղդաբերին , որով փախաբայտնաւ էին որ իրենց եղած խոտման համբաւով Հակահասունեան հասարակութեան վարչական ժողովին վերաբերեալ Պոլսոյ լրագրին արտի ։ Այս գործն Առաջին նախարարէն՝ նախարարաց խորհրդին յանձնուեցաւ , յիշեալ խորհրդէն ալ կրօնական գործող տեսչին , իսկ նո ալ լինելիք համաձայնութեան մէջ ապագայ բացառութիւն մը տալ կը թուի՝ ի մեծ վրահատութիւն Գեր. Հասունի գործն հակահասունեաց ։

Ս. Երուսաղէմէն մայրաքաղաքս եկող Գեր. Երեմիա եպիսկոպոս և Արթ. Սանատրեանց Յակօր վարդապետ՝ ոյսօրուան Ռուսական շողենաւով կը մեկնին ի Ս. Լիվիանին ։

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼԲԱՐՈՑ

Թիքան ԵՒ ՎԱՅՊՈՒՐԱԿԱՆ

Վ. 1879 Նոյ. 6/18

Թիքան Տէր .

Արդէն ծանօթ էք այն ժողովրդական հանրագրին՝ որ անցեալները պատգամաւորութեան մը միջոցաւ տեղացի Եւրոպական հիւպատոսաց ներկայացուեցաւ . նախորդ նամակաւ հանրագրին մի պատճէնը Ձեզի գրեալ էր , պատգամաւորութեան և Եւրոպական հիւպատոսաց մէջ տեղի ունեցած կարեւոր խօսակցութիւնը յորդոք նամակաւ գրեալ խոստումով ։

Պ. Քէյլիթն , որ Անգլիոյ նախարարական կուսակցութեան կը վերաբերի , և որ Լոնս Սպիտալըի բերանը կարելի է համարել , հանրագրը լսելէ վերջը պատասխանեց . « Ճշմարիտ է որ Ձեր երկրին մէջ անլսելի հարստահարութիւնը կը պատահին , որոց շատերը նոյն իսկ ես իմ աչքով տեսած և իմ տէրութեան տեղեկագրած եմ , սակայն Ապետին ուշիկն Տիգրտակերտի դաւառին մէջ ի գործ դրած բարենորոգումներ և Կարնոյ կայսերական բարեկարգիչ յանձնաժողովին Կարնոյ գաւառին մէջ արած գործերը , որք թէ անհաշիւ , սակայն ապագայ բարենորոգման աղաղոյցներ են , ցոյց կուտան թէ այս երկրին մէջ ալ բարեկարգութիւնը պիտի կատարուի , զի այս գաւառն ալ Տիգրտակերտի և Կարնոյ գաւառաց նման միևնոյն վեհապետի գաւառներն են , իսկ այս երկրին մէջ բարենորոգմանց յապաղման միակ պատճառը երկրի հեռաւորութիւնն է ։ Արդ Ձեզ կը մնայ ժամանակ մը ևս համբերել , յուսով որ անպատճառ պիտի դործադրին բարենորոգումներ ։

Պատգամաւորութիւն պատասխանեց .

« Դուք Պէրլինի դաշնագրին 61 երրորդ յօդուածին մէջ , խոստացաւ Հայաստանի և Հայաբնակ գաւառաց մէջ նախապալ բարենորոգումները փութալուցնել , Մեք որ հազարաւոր անգործադրելի խոստումներ և հրովարտանքներ տեսած եմք , անտարադիս չը պիտի հաւատայինք այն խոստման . բայց որովհետեւ Եւրոպական տէրութիւնը նոյն յօդուածի գործադրութեան վրայ հսկելու իրաւունք և Անգլիական մեծագոր կառավարութիւնը Ալպարտի դաշնագրութեամբ Փորը Ասիոյ բարենորոգմանց պատասխանութիւնը ստանձնեցին , պիտի այն մեք իրաւունք ունենան յուսալու որ բարեկարգութիւնը գործադրին . սակայն ցարդ ձեռք առնուած միջոցներն անբաւական և միակ շրջապէս նպատակ մը ունենալով , իրական բարենորոգումներ չատ երկար ժամանակ պիտի տան , և մեր ժողովուրդը որ 1878 ի հրդեհէն բուրովին չըստի դարձած և պատերազմի ժամանակ ի գործ դրուած հարստահարութեանց պատճառաւ սպառած է , այլ ևս չէ կարող համբերել ։ Դուք իսկ Ձեր աչքը կը տեսնաք որ մեր երկրին մէջ պատահած հարստահարութեանց առաջին առնուլ գծուած չէ , այլ կամը միայն կը պակսի ։ Յորդ է որ Ապետին պէյ Տիգրտակերտի գաւառին մէջ մի քանի բարենորոգումներ գործադրեց , սակայն զայն անմիջապէս իւր պաշտօնէն հեռացնելու բարենորոգմանց ճշմարտ կամքին վրայ արտակոյտ կազմէ մեզ ։

Պ. Քէյլիթն . « Պատերազմէն առաջ բարենորոգմանց համար ի գործ դրուած միջոցները թերեւ չլացնելու նպատակաւ լինէին . իսկ այժմ միևնոյն նպատակը չեն կրնար ունենալ , զի Եւրոպական հիւպատոսներն իրենց տէրութեանց լիովին կը տեղեկագրեն բարենորոգմանց արդիւնքը , որք վերջին պատերազմին դաւանալի հետեանց և Օսմանեան գանձուի երմտական տաղանային իրաւացի պատճառներով ստոյգ է որ բաւական յապաղեցան ։

Պատգ. « Տէր , Ձեր ուշադրութիւնը մասնաւորապէս կը հրաւիրեմք մեր ժողովրդեան անհնարին կացութեան վրայ , որ վերջին ատեններս հարստահարութեանց բարբառալուն առթիւ աւելի դժուարացած է ։ Վերջին պատերազմին շնորհիւ Քիւրդերէն շատերը կառավարութեան ընտիր դէմքերով գինեալ են , զորս տեղական կառավարութիւնը նոցա

